«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ (ՊԱՅՄԱՆՆԵՐ)

1. **Ընդհանուր դրույթներ**

1.1. Սույն փաստաթուղթը (այսուհետ՝ «Պայմանագիր») սահմանում է «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ (այսուհետ՝ «Ընկերություն») կողմից Հաճախորդին (Ընկերությունը և Հաճախորդն այսուհետ համատեղ հիշատակման դեպքում կանվանվեն նաև «Կողմեր», իսկ առանձին հիշատակման դեպքում՝ «Կողմ») ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման պայմանագրի պայմանները և Ընկերության ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման կանոնների (այսուհետ՝ «Կանոններ»), Ընկերության պաշտոնական կայքում հրապարակվող՝ ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման սակագների (այսուհետ՝ «Սակագներ»)[1] և Պայմանագրում և Կանոններում նշված՝ Ընկերության պաշտոնական կայքում հրապարակվող այլ փաստաթղթերի հետ միասին հանդիսանում է Ընկերության և Հաճախորդի միջև կնքված՝ ներդրումային և/կամ ոչ հիմնական ծառայությունների մատուցման պայմանագիր:

1.2. Պայմանագրի պայմաններն ընդունելու համար Հաճախորդը Ընկերության սահմանած ձևով ներկայացնում է դիմում (այսուհետ՝ «Դիմում»):

1.3. Պայմանագրի որևէ դրույթ չի կարող մեկնաբանվել որպես այն կնքելու հրապարակային օֆերտա: Ընկերությունը ՀՀ օրենսդրությամբ և իր ներքին իրավական ակտերով սահմանված կարգով իրավասու է մերժելու ցանկացած անձի ներկայացրած Դիմում:

1.4. Պայմանագրում օգտագործվող հասկացություններն ունեն Կանոններում սահմանված նշանակությունները, իսկ Կանոններում սահմանված չլինելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ և/կամ միջազգային սովորույթներով ընդունված նշանակությունները:

2. **Կողմերի իրավունքները և պարտավորությունները**

2.1. Ընկերությունը իրավունք ունի.

2.1.1. ՀՀ օրենսդրությամբ, Պայմանագրով, Կանոններով և իր ներքին իրավական ակտերով սահմանված հիմքերով (ներառյալ՝ ՓԼԱՖ դեմ պայքարի մասին օրենսդրության պահանջների կատարման նպատակով) և կարգով Հաճախորդից պահանջել և ստանալ ծառայությունների մատուցման (ներառյալ՝ կոնկրետ պատվերի/գործարքի կատարման) համար անհրաժեշտ տեղեկատվություն,

[1] Եթե Կողմերի միջև փոխադարձ համաձայնեցվում են այլ՝ Ընկերության պաշտոնական կայքում հրապարակվածներից տարբերվող սակագներ, ապա այդ համաձայնությամբ սահմանված ծառայությունների հանդեպ կիրառվում են այդ սակագները:

2.1.2. ՀՀ օրենսդրությամբ, Պայմանագրով, Կանոններով և իր ներքին իրավական ակտերով սահմանված հիմքերով (ներառյալ՝ ՓԼԱՖ դեմ պայքարի մասին օրենսդրության պահանջների կատարման նպատակով) և կարգով մերժել Հաճախորդի պատվերի/գործարքի կատարումը, ինչպես նաև միակողմանիորեն լուծել Պայմանագիրը,

2.1.3. միակողմանիորեն փոփոխել Պայմանագրի պայմանները (ներառյալ՝ Կանոնները և Ընկերության պաշտոնական կայքում հրապարակված Սակագները)՝ այդ մասին առնվազն դրանք ուժի մեջ մտնելուց 20 (քսան) օր առաջ տեղեկացնելով Հաճախորդին,

2.1.4. Կանոններով նախատեսված դեպքերում և կարգով իր անունից գրավադրել, փոխառությամբ տրամադրել, որպես ավանդ ներդնել կամ այլ կերպ օգտագործել Հաճախորդի միջոցները (Ընկերության տիրապետմանը հանձնված արժեթղթերը և դրամական միջոցները),

2.1.5. Հաճախորդի միջոցները (Ընկերության տիրապետմանը հանձնված արժեթղթերը և դրամական միջոցները) հաշվառել որպես Ընկերության նկատմամբ Հաճախորդի պարտավորությունների կատարումն ապահովող միջոց,

2.1.6. մինչև Պայմանագրի կնքումը, ինչպես նաև դրա գործողության ամբողջ ընթացքում ՀՀ օրենսդրությամբ, Պայմանագրով, Կանոններով և իր ներքին իրավական ակտերով (ներառյալ՝ ՓԼԱՖ դեմ պայքարի մասին օրենսդրությամբ և ներքին իրավական ակտերով) սահմանված կարգով իրականացնել Հաճախորդի, Հաճախորդի հաճախորդների, Հաճախորդի կոնտրագենտների և գործարքների ուսումնասիրություններ,

2.1.7. ՀՀ օրենսդրությամբ և Կանոններով սահմանված դեպքերում չկատարել Հաճախորդի պատվերը,

2.1.8. միակողմանիորեն լուծել Պայմանագիրը և փակել Հաճախորդի Ներդրումային հաշիվը, եթե Հաճախորդի Ներդրումային հաշիվը զրոյական է, և վերջին 1 (մեկ) տարում որևէ գործառնություն չի կատարվել, ինչպես նաև Հաճախորդի Ներդրումային հաշիվը բացասական դառնալուց 3 (երեք) ամիս հետո,

2.1.9. իրականացնել ՀՀ օրենսդրությամբ և Կանոններով սահմանված այլ իրավունքներ:

2.2. Ընկերությունը պարտավոր է.

2.2.1. Ծառայությունները մատուցել պատշաճ մասնագիտական որակով՝ ՀՀ օրենսդրությամբ, Պայմանագրով և Կանոններով (ներառյալ՝ Պատվերների կատարման քաղաքականությամբ) սահմանված կարգով, ներառյալ՝ սահմանված կարգով կատարել Հաճախորդի պատվերները,

2.2.2. ՀՀ օրենսդրությամբ, Պայմանագրով և Կանոններով սահմանված կարգով իրականացնել Հաճախորդի հանդեպ իր ֆիդուցիար պարտավորությունները,

2.2.3. ՀՀ օրենսդրությամբ, Պայմանագրով և Կանոններով (ներառյալ՝ Շահերի բախումների կանխարգելման և հաղթահարման քաղաքականությամբ) սահմանված կարգով զերծ մնալ շահերի բախումներից, իսկ այդպիսիք առաջանալու դեպքում՝ նախապատվություն տալ Հաճախորդի շահերին,

2.2.4. ապահովել, որ ծառայությունների մատուցմանը ներգրավվեն բացառապես համապատասխան մասնագիտական որակավորումներ և գիտելիքներ ունեցող աշխատակիցներ,

2.2.5. ՀՀ օրենսդրությամբ, Պայմանագրով և Կանոններով սահմանված կարգով իրականացնել ներդրողների շահերի պաշտպանության բոլոր անհրաժեշտ գործողությունները,

2.2.6. կատարել ՀՀ օրեսդրությամբ, Պայմանագրով և Կանոններով սահմանված այլ պարտականություններ:

2.3. Հաճախորդը իրավունք ունի.

2.3.1. Կանոններով սահմանված ձևով և կարգով ներկայացնել պատվերներ,

2.3.2. ՀՀ օրենսդրությամբ, Պայմանագրով և Կանոններով սահմանված ձևով, կարգով և ժամկետներում ստանալ հաշվետվություններ Պայմանագրի շրջանակներում իրեն մատուցված ծառայությունների վերաբերյալ,

2.3.3. Ընկերությունից պահանջել իրեն վերաբերվել որպես ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ և իր նկատմամբ կիրառել ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական պահանջները (Կանոններով սահմանված կարգով որպես պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգվելու դեպքում),

2.3.4. Ընկերությունից պահանջել ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից հրապարակման և/կամ հաճախորդներին բացահայտման ենթակա տեղեկատվությունը,

2.3.5. իրականացնել ՀՀ օրենսդրությամբ և Կանոններով սահմանված այլ իրավունքներ:

2.4. Հաճախորդը պարտավոր է.

2.4.1. Պայմանագրով կարգավորվող իրավահարաբերությունների շրջանակներում խստորեն հետևել ՀՀ օրենսդրությանը, Պայմանագրի պայմաններին (ներառյալ՝ Կանոններին և Սակագներին) և, կիրառելիության դեպքում՝ Ընկերության ներքին իրավական ակտերին,

2.4.2. իրեն մատուցված ծառայությունների դիմաց վճարել Սակագներով սահմանված չափով և Պայմանագրի 3-րդ գլխով սահմանված կարգով,
2.4.3. Պայմանագրի շրջանակներում Ընկերությանը տրամադրել բացառապես հավաստի և ճշգրիտ տեղեկատվություն,
2.4.4. դիմել Ընկերությանն իրեն որպես ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ վերաբերվելու պահանջով, եթե կարծում է, որ ի վիճակի չէ գնահատել և կառավարել ներդրումային ծառայություններից կամ ներդրումներից բխող ռիսկերը,
2.4.5. կատարել ՀՀ օրենսդրությամբ և Կանոններով սահմանված այլ պարտականություններ
2.4.6. դիմել Ընկերությանը՝ իրեն որպես ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգելու պահանջով, եթե Ընկերության կողմից դասակարգվել է որպես պրոֆեսիոնալ հաճախորդ, սակայն կարծում է, որ ի վիճակի չէ գնահատել և կառավարել ներդրումային ծառայություններից կամ ներդրումներից բխող ռիսկերը,
2.4.7. Ընկերությանը տեղեկացնել այն փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել հաճախորդի պրոֆեսիոնալ դասակարգման վրա:

3. Ծառայությունների դիմաց վարձատրության հաշվարկման և վճարման կարգը

3.1. Ծառայությունների համար վճարները և դրանց հաշվարկման կարգը սահմանվում են Սակագներով և/կամ Կողմերի առանձին համաձայնությամբ:
3.2. Հաճախորդը լիազորում է Ընկերությանը Սակագները և Պայմանագրի 3.3. կետով սահմանված վճարները անակցեպտ կարգով գանձել Հաճախորդի դրամական հաշվից, Ընկերության անունով բացված բանկային հաշիվներից, որոնցում հաշվառվում են Հաճախորդի դրամական միջոցները, իսկ այդպիսի հաշիվներին միջոցների բացակայության դեպքում պարտավորվում է փոխանցել Ընկերության բանկային հաշվին այդ մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) բանկային օրվա ընթացքում: Ծանուցվելուց հետո 3 (երեք) բանկային օրվա ընթացքում պահանջվող գումարները Հաճախորդի կողմից չփոխանցվելու դեպքում Ընկերությունն իրավասու է Հաճախորդի հանդեպ իր պահանջները բավարարել նրա արժեթղթերի հաշվում առկա արժեթղթերից՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 373-րդ և 374-րդ հոդվածներով սահմանված կարգով: Պահանջների բավարարման նպատակով արժեթղթերն իրացվում են շուկայական գնով:
3.3. Ի հավելումն ծառայությունների դիմաց վճարման՝ Հաճախորդը սույն գլխով սահմանված կարգով նաև փոխհատուցում է իրեն ծառայությունների մատուցման կապակցությամբ Ընկերության կատարած ոչ ստանդարտ ծախսերը: Հաճախորդը պարտավորվում է

կատարել երրորդ անձանց (առևտրային համակարգերի, պահառուների, միջնորդ բրոքերների և այլն) կողմից սահմանված ոչ ստանդարտ վճարները՝ կապված իր գործարքների հետ:

4. Հաճախորդին հաշվետվությունների տրամադրումը

4.1. Ընկերությունը բրոքերային և պահառության ծառայությունների մատուցման շրջանակներում Հաճախորդի պատվերը կատարելուց հետո՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, նրան տրամադրում է պատվերի կատարման մասին հաշվետվություն՝ Կանոններով սահմանված ձևով և կարգով:

4.2. Փաթեթի կառավարման ծառայության մատուցման շրջանակներում Ընկերությունը եռամսյակային կտրվածքով՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, Կանոններով սահմանված ձևով և կարգով Հաճախորդին տրամադրում է հաշվետվություն: Եթե Հաճախորդը Դիմումում նշել է յուրաքանչյուր գործարքի կապակցությամբ հաշվետվություն ստանալու իր ցանկության մասին, ապա փաթեթի կառավարման ծառայության մատուցման շրջանակներում հաշվետվությունները տրամադրվում են ըստ յուրաքանչյուր գործարքի՝ Կանոններով սահմանված ձևով և կարգով:

4.3. Ընկերությունն ամսական կտրվածքով՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը, ինչպես նաև ըստ Հաճախորդի պահանջի նրան տրամադրում է նրա ներդրումային և արժեթղթերի հաշվիների քաղվածքը:

4.4. Հաշվետվությունների և քաղվածքների ձևերը հրապարակվում են Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում:

5. Կապի իրականացման կարգը և տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցները

5.1. Պայմանագրի շրջանակներում Կողմերը կապը և հաղորդակցությունը իրականացնում են բացառապես տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով:

5.2. Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցները սահմանվում են Ընկերության և Հաճախորդի միջև առանձին ստորագրվող փաստաթղթում, որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

5.3. Կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է ողջամիտ ժամկետներում մյուս Կողմին տեղեկացնել իր տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցի (միջոցների) փոփոխության մասին: Սույն կետում նշված պարտավորությունը չկատարած Կողմը կրում է դրանից բխող բոլոր բացասական հետևանքները:

6. Կողմերի պատասխանատվությունը և վնասների հատուցումը

6.1. Պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է լրիվ ծավալով փոխհատուցել Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով մյուս Կողմին պատճառված վնասները:

6.2. Պայմանագրով սահմանված պարտավորությունների կետանց թույլ տալու դեպքում կետանց թույլ տված Կողմը մյուս Կողմի պահանջով նրան վճարում է տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար կետանցված պարտավորության 0,13%-ի չափով: Սույն կետով սահմանված տույժի ընդհանուր չափը ցանկացած դեպքում չի կարող գերազանցել ՀՀ օրենսդրությամբ թույլատրելի առավելագույն չափը:

6.3. Պայմանագրի 8-րդ գլխով նախատեսված պարտավորությունները (պարտավորությունը) խախտած Կողմը խախտման յուրաքանչյուր դեպքի համար մյուս Կողմին վճարում է տուգանք՝ 2,000,000 (երկու միլիոն) ՀՀ դրամի չափով:

6.4. Պայմանագրի 9-րդ գլխով սահմանված հավաստումները խախտած Կողմը պարտավոր է փոխհատուցել այդպիսի խախտմամբ մյուս Կողմին պատճառված վնասները:

6.5. Կողմերն ազատվում են Պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե այդպիսի չկատարումը հետևանք է անհաղթահարելի ուժի հանգամանքների ազդեցության: Անհաղթահարելի ուժի հանգամանքներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, հայտարարված պատերազմը կամ փաստացի պատերազմական գործողությունները, համաճարակը, համավարակը, վթարը, հաղորդակցությունների խաթարումը, այլ բնածին, տեխնածին կամ մարդածին աղետները, հանրային մարմինների ակտերը, գործադուլները, այլ հանգամանքներ, որոնց ուժով Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը դառնում է անհնար, և որոնք Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Կողմը, որի՝ Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման հնարավորության վրա ազդում է անհաղթահարելի ուժի հանգամանք, պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել մյուս Կողմին: Այդպիսի տեղեկացման պահից հետո 3 (երեք) ամսվա ընթացքում անհաղթահարելի ուժի հանգամանքի ազդեցության չվերացման պարագայում Կողմերից յուրաքանչյուրն իրավասու է միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին առնվազն 3 (երեք) օր առաջ տեղեկացնելով մյուս Կողմին:

7. Կիրառելի իրավունքը և վեճերի լուծումը

7.1. Պայմանագիրը կարգավորվում և մեկնաբանվում է ՀՀ նյութական օրենսդրությամբ:

7.2. Պայմանագրից ծագող վեճերը Կողմերը լուծում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ դատավարական օրենսդրությամբ նախատեսված կարգով:

7.3. ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով Պայմանագրից բխող վեճերի լուծումը նաև կարող է հանձնվել ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարին:

8. Գաղտնիությունը

8.1. Կողմերը պարտավորվում են խստորեն պահպանել Պայմանագրի կնքման և կատարման շրջանակներում իրենց հայտնի դարձած ամբողջ տեղեկատվության գաղտնիությունը և այն բացահայտել միայն իրենց այն աշխատակիցներին, խորհրդատուներին և աուդիտորներին, որոնք այդ Կողմի նկատմամբ ստանձնել են գաղտնիության պահպանման՝ Պայմանագրով սահմանված պարտավորություններին համանման պարտավորություններ:

8.2. Պայմանագրի 8.1. կետով սահմանված պարտավորությունը չի տարածվում այն տեղեկատվության վրա, որը.

8.2.1. հանդիսանում է կամ դարձել է հանրաճանաչ ոչ Պայմանագրի խախտման հետևանքով,

8.2.2. օրինական ճանապարհով ստացվել է անկախ երրորդ անձից՝ առանց սահմանափակումների և գաղտնիության պահպանման որևէ պարտավորությունների,

8.2.3. Կողմը ստացել է ինքնուրույն՝ առանց տեղեկատվությանը հասանելիության, այդպիսի տեղեկատվության իմացության կամ օգտագործման՝ ինքնուրույն հետազոտությունների, համակարգային դիտարկումների կամ այլ նմանատիպ գործունեության ընթացքում:

8.3. Պայմանագրի 8.1. կետի խախտում չի համարվում այդ կետով սահմանված տեղեկատվության բացահայտումը, եթե բացահայտման պարտականությունն ամրագրված է օրենքով կամ սահմանված է համապատասխան իրավասության դատարանի կողմից՝ պայմանով, որ հնարավորության առկայության դեպքում բացահայտող Կողմը մյուս Կողմին նախորոք կծանուցի այդպիսի բացահայտման մասին, ինչպես նաև տեղեկատվության այդպիսի փոխանցումը կսահմանափակի պահանջվող նվազագույն ծավալով:

8.4. Ընկերությունն իրավասու է Հաճախորդի վերաբերյալ տվյալները տրամադրել իր գործընկերներին, որոնք Կանոններով սահմանված կարգով Ընկերության կողմից ներգրավվում են Հաճախորդին ծառայությունների մատուցմանը:

9. Կողմերի հավաստումները

9.1. Կողմերը հավաստում և երաշխավորում են, որ.

9.1.1. գրանցված են իրենց գրանցման պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով և ունեն իրենց գործունեության համար անհրաժեշտ բոլոր թույլտվությունները/լիցենզիաները (իրավաբանական անձ հաճախորդների դեպքում)/լրիվ գործունակ են, և նրանց գործունակությունը (ներառյալ՝ Պայմանագիրը կնքելու ունակությունը) որևէ կերպ սահմանափակված չէ,

9.1.2. սահմանված կարգով ստացել են Պայմանագրի կնքման համար անհրաժեշտ բոլոր կորպորատիվ և այլ թույլտվությունները,

9.1.3. Պայմանագրի շրջանակներում իրենց անունից հանդես եկող անձինք պատշաճորեն լիազորված են գործելու համապատասխան Կողմի անունից:

9.2. Ի հավելումն Պայմանագրի 9.1. կետում սահմանված հավաստումների՝ Հաճախորդը նաև հավաստում և երաշխավորում է, որ.

9.2.1. պատշաճորեն ծանոթացել է Պայմանագրին, Սակագներին, Կանոններին (ներառյալ՝ Ընկերության, նրա ծառայությունների, արժեթղթերի մասին տեղեկատվությանը), ինչպես նաև Ընկերության կողմից տրամադրված բոլոր այլ փաստաթղթերին,

9.2.2. իր կոնտրագենտները (պահառության, բրոքերային ծառայությունների շրջանակներում արժեթղթերով գործարքներ կնքելու դեպքում) և հաճախորդները (անվանատիրոջ հաշիվ բացելու դեպքում) ներառված չեն ՀՀ ԿԲ, ՄԱԿ-ի, ԵՄ-ի, ԱՄՆ-ի կամ ՄԹ-ի պատժամիջոցների և սահմանափակումների ցանկերում: Այդպիսի հանգամանքի ի հայտ գալու դեպքում Հաճախորդը պարտավոր է անհապաղ այդ մասին տեղեկացնել Ընկերությանը:

10. Պայմանագրի գործողությունը, լուծումը, փոփոխումը և միջոցների վերադարձը

10.1. Պայմանագիրը կնքված է համարվում Հաճախորդի Դիմումն Ընկերության կողմից բավարարվելու պահից:

10.2. Կողմերն իրավունք ունեն միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ մյուս Կողմին առնվազն 10 (տասը) օր առաջ տեղեկացնելու պայմանով, իսկ եթե Հաճախորդն օգտվում է պահառության ծառայություններից՝ առնվազն 20 (քսան) օր առաջ տեղեկացնելու պայմանով:

10.3. Ընկերությունը կարող է միակողմանիորեն փոփոխել Պայմանագիրը (ներառյալ՝ Կանոնները և Սակագները)՝ այդ մասին տեղեկացնելով Հաճախորդին՝ դրանք ուժի մեջ մտնելուց առնվազն 20 (քսան) օր առաջ: Սույն կետում նշված փոփոխությունների հետ

համաձայն չլինելու դեպքում Հաճախորդը կարող է մինչև դրանց ուժի մեջ մտնելը միակողմանիորեն լուծել Պայմանագիրը:

10.4. Պայմանագիրը կարող է փոփոխվել և լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նրանց ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

10.5. Պայմանագրի լուծման դեպքում Ընկերությունը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ և Կանոններով սահմանված կարգով վերադարձնել Հաճախորդի միջոցները (Ընկերության տիրապետմանը հանձնված արժեթղթերը և դրամական միջոցները):